եթէ ոչ ունիցի յերկիւղ Օրինաց իւրոց ընդունիլ պատիժ չարութեան իւրոյ, զի արդ՝ կարէ զբաղել զդայեարանս իւր և հրաժարիլ 'ի մեղաց, որպէս 'ի վեր ասացաք, որ բնութիւնս մեր միշտ անընդունելի և փոփոխական է, ուրեմն հարկաւոր և միշտ հարկաւոր է մեզ ունենալ կանոնս և մտանել մեզ ըստ Օրինաց և վարել կեանս մեր 'ի մէջ այս մնոտի աշխարհիս շարժմամբն այս փոփոխական բնութեամբս ըստ կերպին կանոնին մերոյ որում ընտրեսցուք մեք վասն բարութեան հոգոյ և մարմնոյ մերոյ։

Բնականապէս սովորութիւն է 'ի բնութիւնս մարդոյ ջանալ, աշխատիլ, վաստակիլ զի գտանիցէ այն որ յինքն թափօր 'ի նմանէ, և մոռանալ և յետս կենալ և անտես առնել այն որում 'ի ձեռին իւրում ունիցի յարաժամ և կամ յայնմանէ որ վասն իւր պատրաստի կալ, և յաւելորդապէս ծախն ժամանակին կենաց մերոց 'ի մեծաց մինչև 'ի փոքր, 'ի հարստաց մինչև տընանկք ամենեքեան ծախելով ժամանակս կենաց իւրեանց, զի կարի ապահով զանձինս և ստացուածս իւրեանց արասցեն, որպէս իշխանք ամրացաւ և հասարակ ժողովուրդք 'ի տունս պարբսպեալք և 'ի տեղի բարեպէս պահպանութեամբ, ահա ես ոչ համարձակիմ տալ ձեզ եթէ ոչ մատամբ իմով ցուցանիմ ձեզ տեղն բանալիքի դրան ապահովութեան անձանց և ստացուածոց